ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԲԵՆԵԴԻԿՏՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՀՌՈՄՈՒՄ

(20-29 սեպտեմբերի 2004 թ.)

Սույն թվականի սեպտեմբերի 20-29-ը Հռոմում տեղի ունեցավ Բենեդիկտյան միաբանության աբբահայրերի վեհաժողովը՝ մասնակցությամբ Եվրոպայի և աշխարհի զանազան շրջաններից ժամանած շուրջ 160 ժողովականների՝ Տիեզերական Պատրիարքությունից, Հայ Առաքելական, Հույն Ուղղափառ, Ռումին Ուղղափառ, Անգլիկան և այլ Եկեղեցիներից:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այդ վեհաժողովին Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրեց Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Առեն աբդ. Շահինյանը:

Բացման խոսքով հանդես եկավ Բենեդիկտյան միաբանության ընդհանուր աբբահայր Նոտկեր Վոլֆը՝ ողջունելով ներկաներին և հայտնելով ժողովի օրակարգի հիմնական նյութերը, որոնք վերաբերում էին գլոբալիզացիային և անցած չորս տարիների ընթացքում միաբանության կատարած աշխատանքներին: Ժողովին ներկա էին բարձրաստիճան պատգամավորներ, հոգևորականներ և աշխարհականներ, համալսարանների դասախոսներ:

Սեպտեմբերի 22-ի բանախոսն էր Ս. Էջիդիո համայնքի նախագահ պրոֆ. Անդրեա Ռիկարդին՝ նյութ ունենալով համամիութենական շարժումը Եկեղեցիների միջև, անդրադառնալով Վատիկանի և քույր Եկեղեցիների միջև հարգանքի փոխադարձ հարաբերություններին:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 23-ին, առավոտյան, ժողովականները մեկնեցին "Castelgandolfo", ուր հանդիպում ունեցան Հռոմի Սրբազան Քահանայապետի հետ: Բենեդիկտյան միաբանության ընդհանուր աբբահայրը Պապին փոխանցեց ժողովականների բարեմաղթանքները՝ արնշատության և քաջառողջ բազում տարիների առաքելության համար: Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց ժողովականներին, Բենեդիկտյան միաբանության ղեկավարությանն ու վանականներին:

Սեպտեմբերի 24-ին ուխտագնացություններ կատարվեցին տարբեր վանքեր՝ ծանոթանալու միաբանության վանական կյանքին ու գործունեությանը:

Հաջորդ օրը զեկուցում կարդացվեց նախորդ չորս տարիների ընթացքում Բենեդիկտյան միաբանության իրականացրած գործունեության մասին՝ նպատակ ունենալով լուրջ քննարկումների ենթարկել այն և ճշտել միաբանության առաջիկա չորս տարիների գործունեութ-

յան գլխավոր ուղղությունները և հիմնական առաջնահերթությունները: Ապա քննարկվեց միաբանության տնտեսական վիճակը և տրվեցին համապատասխան բացատրություններ:

Սեպտեմբերի 27-ին իրենց խոսքով հանդես եկան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Հայր Առենը վեհաժողովին փոխանցեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու ողջույնները և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության աղոթքներն ու լավագույն մաղթանքները: Ժողովը գնահատեց Ուղղափառ Եկեղեցու ներկայությունը՝ այս քայլը նկատելով որպես սկիզբը համամիութենական շարժման, ինչպես նաև սիրո ու հարգանքի արտահայտության դրսևորում:

Ժողովը մասնավորապես մտահոգություն հայտնեց երրորդ աշխարհի երկրներում գլոբալիզացիայի բացասական հետևանքների վերաբերյալ:

Վեհաժողովի ընթացքում նիստերն ուղեկցվում էին ամենօրյա Պատարագներով և ժամերգություններով:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին